ԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՄԱՐ
EUROPEAN UNION FOR ARMENIA

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՓՄՁ ՈԼՈՐՏԻ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՆՈՐ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ԾՐԱԳԻՐ

«Բիզնես հաշտարարի ինստիտուտ. Ներդրման հնարավորություններն ու խնդիրները»

«Chatam house» ձևաչափով փորձագիտա-կան հանդիպման արդյունքների վերլուծություն

Սույն վերլուծությունը պատրաստվել է Եվրոպական միության ֆինանսական աջակցությամբ «Իրավաբանների հայկական ասոցիացիա» հասարակական կազմակերպության ղեկավարությամբ կոնսորցիումով գործարկվող «Կառուցողական երկխոսության հանձնառություն» ծրագրի շրջանակներում տրամադրված ենթադրամաշնորհով՝ «Հայկական բիզնես կոալիցիայի» կողմից իրականացվող «Հայաստանի ՓՄՁ ոլորտի արդյունավետ զարգացման նոր ռազմավարություն» ծրագրի շրջանակներում:

Փաստաթղթի բովանդակության համար պատասխանատու է միայն «Հայկական բիզնես կոալիցիան», և պարտադիր չէ, որ այն արտահայտի Եվրոպական միության տեսակետները:

ՀԱՅԿԱԿԱՆ ԲԻԶՆԵՍ ԿՈԱԼԻՑԻԱ ARMENIAN BUSINESS COALITION

ՄԱՐԴԿԱՅԻՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ

2019 թ-ի մայիսի 14-ին Երևանում՝ Անի պլազա հյուրանոցի Նաիրի սրահում, տեղի է ունեցել «Բիզնես հաշտարարի ինստիտուտ. Ներդրման հնարավորություններն ու խնդիրները» թեմայով կլոր սեղան-քննարկում «Chatam house» ձևաչափով՝ շահագրգիռ կողմերի և ոլորտի փորձագետների մասնակցությամբ:

Կլոր սեղան քաննարկումը կազմակերպվել էր Մարդկային զարգացման միջազգային կենտրոնի (ICHD) աջակցությամբ «Առանց հողումների իրավունքի» հատուկ մեթոդաբանությամբ, որը լավագույն հարթակ է ստեղծում շահագրգիռ կողմերի համար՝ ներկայացնելու բոլոր մտահոգող հիմնահարցերը, ինչպես նաև անկաշկանդ և կառուցողական երխոսության արդյունքում հանգել առավել արդյունավետ լուծումների:

Քննարկման համար հիմք է հանդիսացել «Հայաստանի ՓՄՁ ոլորտի արդյունավետ զարգացման նոր ռազմավարություն» ծրագրի շրջանակներում 2018 թվականի նոյեմբերից մինչև 2019 թվականի մայիս ամիսները Գյումրի և Գավառ քաղաքներում Բիզնես հաշտարարի պիլոտային գրասենյաների փորձարման արդյունքները, գործարար շահերի պաշտպանության ինստիտուտների միջազգային փորձի ուսումնասիրությունը, ինչպես նաև 2019-ի ապրիլ-մայիս ամիսներին իրականացրած ՓՄՁ ոլորտի գնահատման հետազոտությունը, որի ներքո առավել մանրամասն անդրադարձ է կատարվել դատական համակարգի ազդեցությանը ՓՄՁ ոլորտի զարգացման վրա և բիզնես հաշտարարի գրասենյակի ներդրման նախադրյալներին:

Հանդիպումը վարում էր Մարդկային զարգացման միջազգային կենտրոնի գործադիր տնօրեն Արմեն Գալստյանը:

Որպես խոսնակներ հանդես եկան.

1. Հակոբ Ավագյանը (ՓՄՁ համագործակցության ասոցիացիայի փոխնախագահ)
2. Սաթիկ Բաղեյանը (Հայաստանի սոցիալական ձեռնարկությունների ասոցիացիայի նախագահ)
3. Լևոն Սարգսյանը (Մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակի գործարարության ոլորտում իրավունքների պաշտպանության բաժնի պետ ներկայացրեց)

Ներկայացումներ.

Հակոբ Ավագյանը ներկայացրեց Հայաստանում բիզնես հաշտարարի ինստիտուտի ներդրման հնարավորությունները, անհրաժեշտությունն ու խնդիրները: Նշելով, որ արդեն բավականին երկար ժամանակ քննարկվում է բիզնես հաշտարարի կամ բիզնես օմբուդսմենի ինստիտուտի ներդրման անհրաժեշտությունը Հայաստանում: Տարածաշրջանի երկրները՝ Վրաստանը, Ուկրաինան, Ռուսաստանը, Մոլդովան, արդեն տևական ժամանակ է ներդրել են տարբեր ձևաչափերով այս ինստիտուտը:

Սաթենիկ Բաղեյանը ներկայացրեց գործարարության խնդիրների և բիզնես հաշտարարի անհրաժեշտության վերաբերյալ ՓՄՁ-ների շրջանում իրականացված հարցման արդյունքները: Հարցումներին մասնակցել էին Հայաստանի Հանրապետությունում գրանցված 300 կազմակերպություններ բոլոր մարզերից և Երևանից, որոնց գերակշիռ մասը՝ 88%-ը, նշել էր բիզնես հաշտարարի ինստիտուտի ներդրման անհրաժեշտությունը:

Լևոն Սարգսյանը՝ Մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակի գործարարության ոլորտում իրավունքների պաշտպանության բաժնի պետը, ներկայացրեց բիզնես հաշտարարի ինստիտուտի ներդրման հետ կապված իրավական կարգավորման խնդիրներն ու սահմանափակումները:

Քննարկումներ և առաջարկություններ.

Բացահայտված խնդիրների շուրջ ծավալված քննարկումների արյունքում հնչեցին հետևյալ տեսակետներն ու առաջարկությունները:

- Բիզնես հաշտարարի ինստիտուտը կոչված է լինելու ապահովել երկխոսություն՝ բիզնեսի և գործադիր մարմնի միջև:
- Մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակի ծանրաբեռնվածության և սահամանափակ ռեսուրսների շնորհիվ հնարավոր չէ ապահովել նաև բիզնեսի խախտված իրավունքների արդյունավետ և ժամանակին վերականգնումը:
- Բիզնես հաշտարարի ինստիտուտը կլիցքաթափի նաև դատարանների գործունեությունը: Դատական համակարգի նկատմամբ չկա վստահություն, բյուրոկրատական քաշքշուկի պատճառով հաճախ գործարարները խուսափում են դիմել դատարաններ, ինչը անհրաժեշտ է արդյունավետ տնտեսական քաղաքականություն իրականացնելու համար:
- ՄԻՊ գրասենյակի հետ միասին բիզնես հաշտարարի ինստիտուտը պետք է միմյանց փոխլրացնեն: Բիզնես հաշտարարի ինստիտուտը պետք է հնարավորինս արագ լուծի բիզնեսի խնդիրները, որպեսզի գործը չհասնի ՄԻՊ գրասենյակ:
- Պետք է խուսափել արդեն գործող մարմնին տրված լիազորությունների դուպլիկացիայից, որպեսզի դիմողների համար այդ մարմինների ֆունկցիաների շփոթություն չառաջանա:
- Նոր ինստիտուտ ներդնելու փոխարեն ռեսուրսներն ուղղել արդեն գոյություն ունեցող ինստիտուտների կարողությունների զարգացմանը:
- Բիզնես հաշտարարի և բիզնես օմբուդսմենի ինստիտուտները սկզբունքորեն միմյանցից տարբեր են: Բիզնես օմբուդսմենն ավելի մեծ լիազորություններ ունի համակարգային խնդիրներ լուծելու հարցում, սակայն կարելի է սկսել բիզնես հաշտարարի ինստիտուտի ներդրումից, որը, վերջնական արդյունքում կվերածվի բիզնես օմբուդսմենի գրասենյակի:
- Անկախ բիզնես հաշտարարի ինստիտուտի ներդրումը պետական համակարգի վրա կունենա դրական հակակշռող ազդեցություն:

- Առաջին հերթին պետք է սկսել բիզնես միջավայրի առողջացումից: Դրա համար անհրաժեշտ է բիզնեսը դուրս բերել ստվերից:
- Ներդրումների ներգրավման, տնտեսական աճ ապահովելու համար պետք է հինել բիզնես հաշտարարի ինստիտուտ, որը մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակից մի օղակ ներքև կգործի:
- Բիզնես հաշտարարի ինստիտուտի հիմքում կարելի է ներդնել ֆինանսական հաշտարարի գաղափարը, որը բավականին արդյունավետ աշխատում է ՄԻՊ գրասենյակի հետ, որին բիզնես միջավայրն ընկալում է ոչ թե որպես դատավոր կամ վերահսկող, այլ գործընկեր:
- Բիզնես հաշտարարի վերաբերյալ օրենքի նախագիծը նորից վերադարձնել շրջանառության, հանդիպել Ազգային ժողովի համապատասխան հանձնաժողովների և կառավարության ներկայացուցիչներին, նախագծում լրացումներ և փոփոխություններ անելու համար: